ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում բնական աշխարհահամակարգ։**

1) ջրամբարը
2) անտառը
3) արոտավայրը
4) քաղաքը

2 **Ստորև թվարկված միտումներից որի՞ պարագայում են մարդկության առջև ծառացած բազմաթիվ հիմնախնդիրներ ստանում համամոլորակային բնույթ ու դրսևորումներ։**

1) մաթեմատիկացում
2) էկոլոգացում
3) սոցիոլականացում
4) գլոբալացում

3 **Ո՞րն է տեղանքում կողմնորոշման առավել ճշգրիտ միջոց.**

1) Արեգակը
2) լիալուսինը
3) կողմնացույցը
4) Բևեռային աստղը

4 **1 : 50 000 000 մասշտաբ ունեցող գլոբուսի վրա երկու կետերի հեռավորությունը 5,6 սմ է։ Որքա՞ն կլինի դրանց իրական հեռավորությունը.**

1) 6800
2) 1450
3) 2800
4) 8750

5 **Ստորև թվարկվածներից ո՞րն է ձևավորվում երկրագնդի պտույտի և միջուկում նյութերի տեղաշարժերի անմիջական պատճառով։**

1) մագնիսական դաշտը
2) բևեռափայլը
3) ավազային անապատը
4) քարոլորտը

6 **Ստորև թվարկվածներից ո՞ր ժամանակաշրջանն է մտնում կայնոզոյան դարաշրջանի մեջ։**

1) կարբոն
2) նեոգեն
3) տրիաս
4) օրդովիկ

7 **Ստորև թվարկվածներից ո՞ր ապարն ունի փոխակերպային ծագում։**

1) բազալտ
2) ածուխ
3) քվարց
4) կավիճ

8 **Ո՞րն է Խաղաղ օվկիանոսի օվկիանոսային հոսանքներից։**

1) Պերուական
2) Բենգելյան
3) Գոլֆստրիմ
4) Բրազիլական

9 **Ստորև թվարկվածներից ո՞ր լիճն ունի մնացորդային ծագում։**

1) Բայկալ
2) Աժդահակ
3) Սևանա
4) Արալյան

10 **Մթնոլորտի ո՞ր շերտն է տարածվում 50-55 կմ բարձրություններում։**

1) արտաքին ոլորտ
2) ներքնոլորտ
3) օզոնային շերտ
4) վերնոլորտ

11 **Ստորև թվարկվածներից ո՞րը կլիմայաստեղծ գործոն *չէ։***

1) աշխարհագրական լայնություն
2) ամպամածության աստիճան
3) տեղանքի բարձրություն
4) գերիշխող քամիներ

12 **Ստորև թվարկված հողատիպերից ո՞րն է ամենաշատը պարունակում հումուս։**

1) պոդզոլային հողեր
2) դեղնահողեր
3) կարմրահողեր
4) սևահողեր

13 **Որտե՞ղ են ստեղծվում օազիսները։**

1) սելվասներում
2) անապատներում
3) կամպոսներում
4) սավանաներում

14 **Ստորև թվարկվածներից ո՞ր նեղուցով է Մադագասկարը բաժանվում Աֆրիկայից։**

1) Մոզամբիկի
2) Ջիբլարթարի
3) Բոսֆորի
4) Դարդանելի

15 **Ստորև թվարկվածներից ո՞ր քամիներն են ձևավորվում Աֆրիկայի արևադարձային գոտիներում և փչում են դեպի հասարակած։**

1) տոռնադո
2) մուսսոն
3) պասսատ
4) թայֆուն

16 **Ստորև թվարկվածներից ո՞ր ծովածոցն է ողողում Ավստրալիայի ափերը։**

1) Ադենի
2) Հուդզոնի
3) Գվինեական
4) Կարպենտարիա

17 **Ստորև թվարկվածներից ո՞ր կենդանին է ապրում Անտարկտիդայում։**

1) կենգուրու
2) պինգվին
3) բադակտուց
4) համրուկ

18 **Ստորև թվարկվածներից ո՞ր ծառն է աճում Հարավային Ամերիկայում:**

1) էվկալիպտ
2) սեխածառ
3) կազուարիա
4) սեքվոյա

19 **Ստորև թվարկվածներից ո՞ր բնական զոնան է տարածված Հյուսիսային Ամերիկայում:**

1) պրերիա
2) սելվաս
3) պամպա
4) լյանոս

20 **Ստորև թվարկվածներից ո՞ր լեռնաշղթան է գտնվում Հյուսիսային Ամերիկայում:**

1) Ապալաչյան
2) Ատլասի
3) Սկանդինավյան
4) Կապի

21 **Ստորև թվարկված գետերից ո՞րը *չի* հոսում Եվրասիայով:**

1) Մեկոնգ
2) Ամուր
3) Յանցզի
4) Մուրեյ

22 **Ստորև թվարկված սարահարթերից ո՞րը *չի* գտնվում Եվրասիայում:**

1) Արաբական
2) Գոբի
3) Լավրենտյան
4) Դեկանի

23 **Ստորև թվարկվածներից ո՞ր գործող հրաբուխն է գտնվում Հարավային Ամերիկայում:**

1) Էտնա
2) Կոտոպախի
3) Հեկլա
4) Կրակատաու

24 **Նշված պետություններից ո՞րն է ձևավորվել աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման հին փուլում։**

1) Ասորեստան
2) Բյուզանդիա
3) Պորտուգալիա
4) Ղազախստան

25 **Հետևյալ գետերից որի՞ ափին է ձևավորվել շումերական քաղաքակրթությունը։**

1) Յանցզի
2) Նեղոս
3) Տիգրիս
4) Արաքս

26 **Նշվածներից ո՞րն է համարվում անկլավ։**

1) Սան Դիեգո
2) Սան Պաուլու
3) Սան Մարինո
4) Սան Ֆրանցիսկո

27 **Նշված գործոններից ո՞րը *չի* ազդում բնակչության տեղաբաշխման վրա։**

1) ժողովրդագրական
2) պատմական
3) կրոնական
4) բնական

28 **Ժողովրդագրական անցման ո՞ր փուլն է կապված տնտեսության զարգացման հետարդյունաբերական փուլի հետ։**

1) առաջին
2) երկրորդ
3) երրորդ
4) չորրորդ

29 **Նշվածներից ո՞ր երկրում է կյանքի միջին տևողությունը առավել երկար։**

1) Մոզամբիկ
2) Իտալիա
3) Անգոլա
4) Կոնգո

30 **Շաքարի արտադրության տեղաբաշխման վրա ո՞ր գործոնն է առավելապես ազդում։**

1) հումքային
2) էկոլոգիական
3) աշխատանքային
4) վառելիքաէներգետիկ

31 **Նշվածներից ո՞ր երկիրն է համարվում կապիտալի խոշոր արտահանող։**

1) Աֆղանստան
2) Չինաստան
3) Տաջիկստան
4) Ղրղզստան

32 **Նշվածներից ո՞ր կրոնը տարածված *չէ* ՌԴ-ում։**

1) քրիստոնեություն
2) մահմեդականություն
3) սինտոյականություն
4) բուդդայականություն

33 **Նշվածներից ո՞ր թերակղզին *չի* գտնվում Հարավային Եվրոպայում։**

1) Պիրենեյան
2) Ապենինյան
3) Բալկանյան
4) Սկանդինավյան

34 **Արևմտյան Եվրոպայի ո՞ր երկիրն է առավելապես անտառապատ։**

1) Ավստրիա
2) Գերմանիա
3) Ֆրանսիա
4) Շվեյցարիա

35 **Հյուսիսային Եվրոպայի արդյունաբերության ճյուղերից ո՞րն է առաջատար։**

1) սննդի արդյունաբերություն
2) էլեկտրաէներգետիկա
3) մետաղաձուլություն
4) մեքենաշինություն

36 **Նշվածներից ո՞ր տարածաշրջանն է առաջատար փյունիկյան արմավի արտադրությամբ:**

1) Արևելյան Ասիա
2) Հարավարևմտյան Ասիա
3) Հարավային Ասիա
4) Հարավարևելյան Ասիա

37 **Հնդկաստանի ուղևորափոխադրումներում տրանսպորտի ո՞ր տեսակն է առաջատար:**

1) ավտոմոբիլային
2) երկաթուղային
3) ծովային
4) օդային

Քարտեզ 1



38 **Քարտեզ 1-ում Ը տառով ո՞ր նավահանգիստն է նշված։**

1) Տոկիո
2) Թայբեյ
3) Շանհայ
4) Սինգապուր

39 **Քարտեզ 1-ում Զ տառով ո՞ր գետն է նշված։**

1) Յանցզի
2) Հուանհե
3) Ամուր
4) Մեկոնգ

40 **Հետևյալ թելատու մշակաբույսերից որի՞ մշակմամբ է Աֆրիկան առավելապես առաջատար։**

1) սիսալ
2) բամբակենի
3) ջութ
4) գանգրավուշ

41 **Լատինական Ամերիկայի մայրաքաղաքներից ո՞րն է գտնվում ավելի քան 3700 մ բացարձակ բարձրության վրա։**

1) Սան Խոսե
2) Լիմա
3) Լա Պաս
4) Կիտո

42 **Հետևյալ գիտնականներից ո՞րը *չի* այցելել Հայաստան։**

1) Հերոդոտոս
2) Պտղոմեոս
3) Քսենոֆոն
4) Ալիշան

43 **Ո՞ր լեռների արևելյան եզրին է գտնվում Թոնդրակ լեռնագագաթը։**

1) Ծաղկանց
2) Գեղամա
3) Ծաղկավետ
4) Զավախքի

44 **Հետևյալ հանքավայրերից որո՞ւմ կա նեֆելինային սիենիտ։**

1) Շվանիձոր
2) Արթիկ
3) Մեղրաձոր
4) Արզնի

45 **Հետևյալ բնակավայրերից որո՞ւմ է արևափայլի տևողությունը ամենաերկարը։**

1) Արենի
2) Գյումրի
3) Արտենի
4) Մարտունի

46 **Հետևյալ դաշտերից որո՞ւմ կան աղուտներ.**

1) Լոռվա
2) Շիրակի
3) Մասրիկի
4) Արարատյան

47 **Հետևյալ հատուկ պահպանվող տարածքներից ո՞րն է համարվում ազգային պարկ։**

1) Էրեբունու
2) Դիլիջանի
3) Խոսրովի
4) Շիկահողի

48 **Վաչագան և Կավարտիջուր վտակները ո՞ր քաղաքով են հոսում։**

1) Սևան
2) Իջևան
3) Կապան
4) Հրազդան

Քարտեզ 2



49 **Քարտեզ 2-ում Բ տառով ո՞ր սարահարթն է նշված:**

1) Ապարանի
2) Սիսիանի
3) Եղվարդի
4) Կոտայքի

50 **Քարտեզ 2-ում Դ տառով ո՞ր մարզն է նշված:**

1) Սյունիք
2) Արագածոտն
3) Տավուշ
4) Գեղարքունիք

51 **Մինչև քանի՞ հազար բնակիչ ունեցող բնակավայրերում են կառուցում բուսատեխնոլոգիական մաքրման կայաններ։**

1) 20000
2) 10000
3) 9000
4) 5000

52 **Զարգացած արդյունաբերական երկրներում առավելապես ի՞նչն է նպաստում հողերի վատթարացմանը։**

1) աղակալում
2) քիմիական աղտոտում
3) գերարածեցում
4) հողի վերին շերտի քայքայում

53 **Ո՞ր նյութերի արտանետման պատճառով են առաջանում թթվային տեղումներ։**

1) ածխածնային միացություններ
2) ազոտական միացություններ
3) ծծմբային միացություններ
4) աղային միացություններ

54 **«XXI դարի օրակարգը» ո՞ր քաղաքում է ստորագրվել։**

1) Ստոկհոլմ
2) Կոպենհագեն
3) Յոհաննեսբուրգ
4) Ռիո դե Ժանեյրո

55 **Ֆրանսիայի և Գերմանիայի միջև ո՞ր տարածքն է համարվում վիճելի։**

1) Սաար
2) Սիլեզիա
3) Տրիեստ
4) Տրանսիլվանիա

56 **Գրել այն ջրաէլեկտրակայանների համարները, որոնք գտնվում են Որոտանի գետային համակարգում:**

1) Արգելի
2) Արզնիի
3) Սպանդարյանի
4) Տաթևի
5) Զորագետի
6) Շամբի
7) Շաքիի
8) Քանաքեռի

57 **Գրել այն լճերի համարները, որոնք ունեն սառցադաշտային ծագում:**

1) Աժդահակ
2) Արմաղան
3) Պարզ
4) Սև
5) Քարի
6) Կապույտ
7) Արփի
8) Ակնա

58 **Գրել այն քաղաքների համարները, որոնք համարվում են ԱՄՆ-ի մեքենաշինության կենտրոններ:**

1) Շտուտգարտ
2) Դետրոյթ
3) Վոլֆսբուրգ
4) Մյունխեն
5) Կիոտո
6) Թուրին
7) Թուլուզ
8) Չիկագո

59 **Գրել այն խառը ռասաների համարները, որոնց ներկայացուցիչներն ապրում են Բրազիլիայում:**

1) ուրալյան
2) պարդո
3) սուդանյան
4) եթովպական
5) մետիս
6) մուլատ
7) սամբո
8) հարավսիբիրական

60 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Ատլանտյան օվկիանոս:**

1) Կոլումբիա
2) Միսիսիպի
3) Վոլգա
4) Նեղոս
5) Կոլորադո
6) Ամազոն
7) Պարանա
8) Հուանհե

61 **Գրել այն ծովերի համարները, որոնք ողողում են Հյուսիսային Ամերիկայի ափերը:**

1) Չուկոտյան
2) Կարիբյան
3) Բարենցի
4) Արաբական
5) Դեղին
6) Հյուսիսային
7) Բերինգի
8) Կորալյան

62 Արևելյան Եվրոպայի երկրները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ։

1) Լեհաստան
2) Բուլղարիա
3) Ռումինիա
4) Ուկրաինա

63 Հարավարևմտյան Ասիայի երկրները դասավորել հարավից հյուսիս հաջորդականությամբ։

1) Քաթար
2) Օման
3) Իրաք
4) Սիրիա

64 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 8,4 մ է, ջրի արագությունը՝ 5 մ/վ, որոշել գետի հոսքը կես ժամում։

65 Քաղաքի բնակչությունը 50 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 600 մարդ։ Ներգաղթողների թիվը 2000 է, իսկ արտագաղթողների թիվը՝ 2400։ Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո։

66 Երկրի բնակչության թիվը 180 000 է, ուրբանիզացման մակարդակը՝ 30%։ Որքա՞ն է քաղաքային բնակչության բացարձակ թիվը։

67 Տվյալ երկրի տարածքը 75000 կմ² է, իսկ ավտոճանապարհային ցանցի խտությունը՝ 2,5 կմ/կմ²։ Որքա՞ն է ավտոճանապարհների երկարությունը։

68 Որքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 4 տոննա նավթի այրումից (ջերմային գործակիցը՝ 1,5)։

69 **Աշխարհի մետաղաձուլության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Մետաղաձուլությունը արդյունաբերության նորագույն ճյուղերից է և բաժանվում է երկու ենթաճյուղի՝ սև և գունավոր մետաղաձուլության։
2) Սև մետաղաձուլության գլխավոր և ամենատարածված հանքային հումքը երկաթաքարն է։
3) Երկաթի հանքաքարի նախնական մշակումը կատարվում է հումքի արդյունահանման շրջաններում։
4) Սև մետաղաձուլության արտադրանքի ծավալով մի քանի անգամ զիջում է գունավոր մետաղաձուլությանը։
5) Ալյումինի արտադրությունը նույնպես հումքատար է ու տեղաբաշխվում է հումքառատ շրջաններում։
6) Պղնձի արտադրությունը էներգատար է, ուստի տեղաբաշխվում է էժան էլեկտրաէներգիայի արտադրության շրջաններում։

70 **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը։
2) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և ուղտաբուծությունը։
3) Խոշոր եղջերավոր անասնապահության գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը։
4) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար են Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան։
5) Այծաբուծությունը զարգանում է հզոր արտադրական համալիրներում, որոնք կառուցվում են բնակչությամբ խիտ բնակեցված շրջաններում։
6) Մեղվաբուծության արտադրանքի ծավալով աշխարհի առաջատար երկրներն են ԱՄՆ-ն, Մեքսիկան, Ֆրանսիան, Ռուսաստանը։